ՆՈՐ ԳՐՔԵՐ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960 թ., 642 էջ, գինը 1 ռ. 12 կ.։ Ժողովածուն կազմված է Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի և Երևանի պետական և պարտադրյան արխիվներից, ինչպես նաև պարբերական մամուլից և այլ աղբյուրներից քաղված փաստաթղթերից ու նյութերից։

Ժողովածուն արտացոլում է Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի աշխատավորության մղած պայքարը՝ հանուն Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման՝ 1917 թ. փետրվարից մինչև 1922 թ. փետրվարն ընկած ժամանակաշրջանում։ Ժողովածուին կցված է ընդարձակ ներածություն, ինչպես նաև ծանոթագրություններ և կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը։

Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը (1920—1960). Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960 թ., 523 էջ, գինը 1 ռ. 80 կ.։

Աշխատության մեջ համառոտակի տրվում է Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման, ինչպես նաև բնակչության բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման բնագավառում ունեցած այն հոյակապ նվաճումները, որ Հայաստանի աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռք է բերել անցած 40 տարիների ընթացքում։

Սարգիս Մելիքսեթյան.—«Ուրվագծեր սովետահայ թատրոնի պատմության», 266 էջ, գինը 1 ռ. 70 կ.։

Աշխատության մեջ հեղինակը նպատակ է դրել ուրվագծել սովետահայ թատրոնի զարգացման պատմական ուղին, վեր հանել ու բացահայտել զարգացման նրա հիմնական էտապների առանձնահատկությունների էությունը, նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործական նկարագիրն ու յուրահատկությունները, ընդգծել սովետահայ թատրոնի վերելքի համար մղած պայքարը. ինչպես և տալ թատրոնի անվանի արվեստագետների սեղմ բնութագիրը։ Աշխատանքը ընդգրկում է հարուստ իլյուստրացիաներ։ Այս աշխատությունը սովետահայ թատրոնի պատմությանը վերաբերող առաջին ծավալուն շարադրանքն է։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի և Հայկական թատերական ընկերության կողմից լույս է տեսել «Սարյանը և թատրոնը» գիրքը, Լևոն Խաչատրյանի հեղինակությամբ, էջ 188, գինը 1 ռ. 02 կ.։

Հեղինակը նորահայտ մի շարք փաստերի և նյութի հանդամանալից ուսումնասիրության միջոցով ցույց է տալիս, թե երբ է Սարյանը մուտք գործել թատրոն, ինչ առընչության մեջ է եղել դարասկզբի ռուս թատրոնի և նրա ականավոր ներկայացուցիչների հետ, երբ և ինչպես է իրականացվել նրա թատերական ձևակերպումները, ինչ գնահատության է արժանացել մամուլի և ժամանակակիցների կողմից։ Գրքում հնարավորին չափ խոսվում է Սարյանի թատերական գրեթե բոլոր ձեակերպումների մասին՝ թե հայկական և թե ռուսական, սովետական բեմերում։ Առանձին գլխում վերլուծման է ենթարկված Սարյանի թատերական դիմանկարները։ Հեղինակը ընդգծում է այն նշանակալից դերը, որ կատարել է Մարաիրոս Սարյանը սովետական բեմարվեստի զարգացման գործում։